"ՆՈՐԱՎԱՆՔ"Ի ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐԸ

Երեւանի «Նորավանք» հիմնարկը ռազմավարական յատուկ «ուղեղային կենտրոն» (think-tank) մըն է, որ աւելի քան 10 տարիէ ի վեր կը գործէ ռազմավարական ուսումնասիրութիւններու ոլորտին մէջ: Ստորեւ կը ներկայացնենք այդ հաստատութեան տնօրէն Գագիկ Յարութիւնեանի հետ մեր շահեկան հարցազրոյցը:


Գագիկ Յարութիւնեան

Ե՞րբ և ի՞նչ նպատակներով է ստեղծուել «Նորավանք» հիմնադրամը:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամը հիմնադրուել է 2001-ին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի որոշումով, որպէս ռազմավարական հետազօտութիւնների և նորարարական մշակումների կենտրոն: Մեր կանոնադրութեան համաձայն՝ հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նախագահը ՀՀ գործող վարչապետն է: «Նորավանքը» հանրապետութեան առաջատար «ուղեղային կենտրոնն» է (think – tank), որտեղ մի քանի տասնեակ փորձագէտներ կատարում են կիրառական նշանակութիւն ունեցող հետազօտութիւններ ինչպէս շրջանային – քաղաքական, այնպէս էլ տեղեկատուական և հայութեան անվտանգութեան ոլորտներում: Հիմնադրամում կազմակերպւում են նաև յատուկ դասընթացներ վերոնշեալ ոլորտների ներկայի խնդիրների շուրջը: Ենթադրւում է, որ այդ դասընթացները պէտք է հիմք հանդիսանան ապագայ «Համահայկական համալսարանի» համար, որտեղ պէտք է ձևաւորուի այն մտաւոր ընտրանին, որն ի զօրու կը լինի արժանավայել պատասխանել հայութեանն և Հայաստանին նետուած մարտահրաւէրներին: «Նորավանքը» հրատարակում է «21-րդ Դար» և «Գլոբուս» վերլուծական պարբերականները՝ իւրաքանչիւրը տարեկան 12 համար, ժողովածուներ և մենագրութիւններ: Հրապարակուող աշխատութիւնների հեղինակներն են ինչպէս «Նորավանքի», այնպէս էլ Հիմնադրամի հետ աշխատակցող հայաստանեան և օտարերկրեայ փորձագէտները, իսկ վերջիններիս թւում քիչ չեն նաև Սփիւռքի ներկայացուցիչները: Ընդհանուր առմամբ վերջին 10 տարուայ ընթացքում հրատարակուել է մօտ 250 ամսագիր և 60 գիրք: Յատուկ նշեմ, որ դրանցից 11-ը նուիրուած են Թուրքիայի, Ռուսաստանի, Իսրայէլի, Միացեալ Նահանգների և եւրոպական հայկական համայնքների արդի խնդիրներին: Յատուկ ուշադրութիւն է դարձւում նաև տեղեկատուական – հոգեբանական խնդիրներին: Օրինակ՝ վերջերս մենք հրատարակեցինք «Մեր Յաղթանակները» քառահատորը, որտեղ ներկայացուած են հայկական ռազմարուեստի փայլուն էջերը սկսած Հայկ Նահապետից մինչև Արցախեան պատերազմ, որի նպատակն է փարատել մեր հանրութիւնում տեղ գտած այն բարդոյթը, թէ մենք պարտուած ազգ ենք (1):

Մենք սերտ կապեր ենք հաստատել մի շարք առաջատար հետազօտական կենտրոնների հետ, ինչպիսիքն են, օրինակ, «Ռազմավարական կանխատեսումների և գնահատականների կենտրոնը» Մոսկուայում և «Քաղաքակրթութիւնների երկխօսութիւն» միջազգային կազմակերպութիւնը:

Ազգային և տեղեկատուական անվտանգութեան տեսակէտից ինչպիսի՞ հիմնախնդիրներ են առկայ Հայաստանում և Սփիւռքում:

Ազգային և դրա կարևորագոյն բաղադրիչ հանդիսացող տեղեկատուական անվտանգութիւնը խիստ լայնածաւալ ու փոխկապակցուած ոլորտներ են: Հայաստանը այսօր գտնւում է կիսապատերազմական իրավիճակում և կարելի է բաւական երկար խօսել յայտնի հակամարտութեան ռազմական կամ տնտեսական խնդիրների, կամ էլ Ադրբեջանի և Թուրքիայի

նկատմամբ այս կամ այն յաջողութեամբ Հայաստանի ու Սփիւռքի կողմից վարուող ամէնօրեայ տեղեկատուական հակամարտութիւնների մասին, կարելի է նաև մեկնաբանել համացանցային – կայքահէնութեան գործողութիւնները և այլն: Սակայն պէտք է հաշուի առնել հետևեալ շատ կարևոր հանգամանքը. արդի աշխարհում Ազգային անվտանգութեան ապահովման ու ազգի զարգացման հենքը տուեալ հանրութեան, մեր պարագայում՝ Հայաստանի և Սփիւռքի հանրութիւնների, մտաւոր և հոգևոր ռեսուրսներն են ու ազգային – քաղաքական ընտրանու կողմից այդ ռեսուրսները նպատակային կազմակերպելու ունակութիւնը: Մենք պէտք է յստակ գիտակցենք, որ առանց մտածուած ռազմավարութեան, որի մշակումը հայկական մտաւոր ընտրանու անմիջական պարտականութիւնն է, հայկական հանրութիւնը մեծ հեռանկարներ դժուար թէ ունենայ: Իմ կարծիքով, անգամ 1915-ի ողբերգութիւնը և դրան յաջորդած զարգացումները մի զգալի չափով պայմանաւորուած էին նման ռազմավարութեան բացակայութեամբ, որի առկայութիւնը գուցէ և թոյլ տար աւելի ճշգրիտ քայլեր ձեռնարկել ազգափրկման ուղղութեամբ:

«Նորավանք»ի սեմինար

Այդ համատեքստում պէտք է համարձակութիւն ունենանք ընդունելու, որ այսօր հայութեան համար բաւական բարդ իրավիճակ է ստեղծուել: Եթէ վերցնենք Հայաստանը, ապա ցաւով պէտք է փաստել, որ 3-րդ Հանրապետութեան գիտական – տեխնոլոգիական ներուժը էապէս (որոշ գնահատականների համաձայն՝ մօտ տասն անգամ) զիջում է 2-րդ Հանրապետութիւնում եղածին: Փակուել են կամ լիարժէք չեն գործում բազմաթիւ հետազօտական ինստիտուտներ, գործարաններ, իսկ գիտելիքներ կրողների մի ստուար մասը այսօր զբաղուած է իրեն ոչ բնորոշ և ոչ ստեղծագործ աշխատանքով: Այս առիթով պէտք է նկատեմ, որ Արցախեան պատերազմում մեր տարած յաղթանակը բրիտանական ռազմական վերլուծաբանները արդարացիօրէն պայմանաւորում են հայկական կողմի ինտելեկտուալ գերակայութեամբ: Այս ոլորտում բարդութիւնները և պրոբլեմները բնորոշ են նաև Սփիւռքի հանրութեանը: «Նորավանքում» իրագործուում է մի նախագիծ, որի նպատակն է բացայայտել և հաշուառել Հայաստանից դուրս գտնուող մեր մտաւորական հայրենակիցներին: Նշեմ, որ նրանք բաւական շատ են, մասնաւորապէս կան տաղանդաւոր հետազօտողներ, որոնք աշխատում են աշխարհի առաջատար think – tank –երում: Սակայն խիստ սակաւ են այն ազգային կառոյցները և մտաւորականները, որոնք համակարգուած և հետևողականօրէն զբաղուում են հայկական խնդիրներով: Այսինքն կարելի է փաստել, որ այսօր հայկական մտաւոր ներուժը հիմնականում ծառայում է այլ պետութիւնների և ազգերի հզօրացմանը և սա պէտք է խիստ մտահոգի մեր ազգային ընտրանուն և ողջ հայկական հանրութեանը:

Յետագայի ինչպիսի՞ ծրագրեր ունէք:

Դրանք շատ են, սակայն կայ մէկը, որի վրայ կուզենայի հրաւիրել Ձեր և Ձեր ամսագրի ընթերցողների ուշադրութիւնը: Վերն արդէն շեշտեցի, որ հայկական հանրութեանը այսօր անհրաժեշտ են իրատեսական ռազմավարական ծրագրեր, քանի որ ապաւինելով միմիայն Ցեղասպանութեան համընդհանուր ընդունման գաղափարին, դժուար թէ հասնենք յաջողութիւնների: Այդ իսկ պատճառով նպատակ ունենք ստեղծել մի հետազօտական կառոյց՝ Research Network Institute, որն օգտագործելով արդի տեղեկատուական – հաղորդակցական միջոցներու հնարաւորութիւնները, թոյլ կը տայ ինչ-որ չափով համախմբել հայկական մտաւոր ներուժը և կը փորձի մշակել ու իրագործել արդիւնաւէտ ազգային ծրագրեր: Ակնյայտ է, այս խնդրի լուծման արդէն սկզբնական փուլում մենք կարիք ունենք կառուցողական խորհուրդների և կազմակերպչական աջակցութեան: Յուսով եմ, որ այս նախագիծը կը հետաքրքրի նաև մեր հայրենակիցներին Եւրոպայում:

Հարցազրոյցը վարեց՝
Տիգրան Եկաւեան

(1) Տպագրուած նիւթերի մի զգալի մասը տեղակայում է մեր կայքում http://www.noravank.am, որն ունի մի քանի հազար բաժանորդ Ռուսաստանում, Ամերիկայում, Եւրոպայում և Մերձաւոր Արևելքում:

Գագիկ Ցարուքեան

Ծնած է 1947-ին: Ընդհանուր առմամբ շուրջ 500 յօդուածների և մի տասնեակ գրքերի հեղինակ և համահեղինակ է: Աւարտած է Երևանի համալսարանը, ապա դարձած է Մոսկուայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտ՝ Նոբելեան մրցանակակիր Նիկոլայ Սեմենովի գիտաշխատանոցին մէջ: Մասնագիտացած է այրման և պայթիւններու բնագիտութեան մէջ: Յետագային տեղափոխուած է Երևան, ուր Ակադեմիայի «Քիմիական ֆիզիկայի» և «Ֆիզիկայի» լաբորատորիաներուն մէջ հիմնած է գիտաշխատանոցներ:

Տ. Ե.